



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

10 սեպտեմբերի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/1

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ԴԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 57 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությունը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությունը ներկայացրեց Երևանի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 10-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
3. «Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն», «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների մեջ փոփոխություն կատարելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
7. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
8. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
9. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
10. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N41-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
11. Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:
12. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 57 անդամ  
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 55, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հայտնեց, որ, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 96-րդ կետով, Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը ձևավորելու նպատակով խմբակցությունները ներկայացրել են առաջարկություններ՝ հաշվիչ հանձնաժողովի կազմում ավագանու հետևյալ անդամների թեկնածություններն առաջադրելու համար.

- ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն՝ Էդուարդ Ավետիսյան,
- ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն՝ Մարկոս Հարությունյան,
- ԼՈՒՅՍ խմբակցություն՝ Անի Խաչատրյան

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը.

1. Էդուարդ Ավետիսյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն
2. Մարկոս Հարությունյան – Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն
3. Անի Խաչատրյան – Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցություն

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 57 անդամ  
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ - 56

դեմ – 0  
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

3. **ԼՍԵՑԻՆ** - «Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն», «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արա Բադրամյան:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն», «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Հաստատել «Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն», «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունը՝ համաձայն N1, N2 հավելվածների:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 54 անդամ  
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

**4. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի **N47**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյան:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի **N47**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

**1.** Արսեն Կարապետյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակվիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի **2019** թվականի բյուջեի մասին» **N47**-Ն որոշմամբ հաստատված.

**1)** եկամուտների գումարը ավելացնել **6,911.0** հազար դրամով,

**2)** ծախսերի գումարը ավելացնել **6,911.0** հազար դրամով,

**2.** Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի **2018** թվականի բյուջեի մասին» **N 47**-Ն որոշմամբ հաստատված **NN 1, 2, 3, 6** և **7** հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար **NN 1-5** հավելվածների:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **54** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **53**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**5. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2013** թվականի սեպտեմբերի **10**-ի **N46**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյան:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

**1.** Հոփսիսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

**2.** Հասմիկ Խաչունց – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գ. Երիցյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2013** թվականի սեպտեմբերի **10**-ի **N46**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

**1.** Հայկ Միրզոյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**2.** Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի ավագանու **2013** թվականի սեպտեմբերի **10**-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» **N46**-Ն որոշման (այսուհետև՝ Որոշում) նախաբանում «Հայաստանի Հանրապետության օրենքի **16**-րդ հոդվածի **34**-րդ կետին, **54.1**-ին հոդվածի **1**-ին և **3**-րդ մասերին» բառերը փոխարինել «օրենքի **18**-րդ հոդվածի **1**-ին մասի **34**-րդ կետին և **84**-րդ հոդվածի **1**-ին մասին» բառերով:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի (այսուհետև՝ Հավելված) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Երևանի քաղաքապետին կից ձևավորվում և գործում են հետևյալ Խորհուրդները.

- 1) համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման,
- 2) քաղաքաշինական,
- 3) շրջակա միջավայրի պահպանության,
- 4) առևտրի և ծառայությունների, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման,
- 5) առողջապահության,
- 6) սպորտի և առողջ ապրելակերպի,
- 7) սոցիալական պաշտպանության,
- 8) կրթության,
- 9) մշակույթի,
- 10) զբոսաշրջության,
- 11) երիտասարդության հարցերի:»:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 54 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 50, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. **ԼՄԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյան:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Արսեն Կարապետյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա հ.57/7 հասցեում «Ատլաս Ինվեստ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 4470.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 53 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. **ԼՄԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյան:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Չաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

«Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի Գրիբոյեդովի փողոցի հ.հ.48, 48 տարածք և 48/4 հասցեներում գտնվող, համապատասխանաբար 4.9873հա, 0.3307հա և 0.045հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 50 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**8. ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյան:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի Հ. Մանանդյան փողոցի հ.41/3 և Մանանդյան փողոցի հ.41/3 շենքի հ.1 հասցեներում գտնվող 6520.7քմ և 5046.0քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 43 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 41, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**9. ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյան:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ**

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ **Ն. Մարությանը** և գլխադասային հանձնաժողովի նախագահ **Ա. Կարապետյանը**:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ **Ա. Ամյանը**:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

**1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ**

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի **Կ. Ուլնեցու** փողոցին հարող տարածքում գտնվող **12.0**քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» կատեգորիայի հողերից փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» նշանակության հողերի կատեգորիա:

**2.** Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման **1-ին** կետով հողամասի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունների մասին **10-օրյա** ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **46** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **45**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**10. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25-ի N41-Ն** որոշման մեջ լրացում կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ **Արսեն Ամյան**:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ **Լևոն Հովհաննիսյանը** տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25-ի N41-Ն** որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25-ի** «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման **2019** թվականի ծրագրի վերաբերյալ» **N 41-Ն** որոշմամբ հաստատված հավելվածի **VI-րդ** գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր **78-93-րդ** կետերով՝ համաձայն հավելվածի:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **44** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **44**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

**11. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ **Արսեն Ամյան**:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Համաձայնություն տալ **2019** թվականի հունիսի **1**-ի դրությամբ կազմված Երևան քաղաքի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելվածի:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **51** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **51**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

**12. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի հունիսի **17**-ի **N106**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **5** անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

3. Անահիտ Ասատրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի հունիսի **17**-ի **N106**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու **5** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը **14.00**-ին:

4. Հասմիկ Խաչունց- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

5. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի հունիսի **17**-ի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» **N106**-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **46** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **44**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **2**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանի առաջարկությամբ որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել **2019** թվականի հոկտեմբերի **8**-ին, ժամը **11.00**-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ (սղագրությունը կցվում է):

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**